

ՀՏԴ 82.09

ՄԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՎ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
siranush.parsadanyan.2014@mail.ru*

Հոդվածի նպատակն է հովհաննես Վանանդեցու «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» պոեմում համեմատության մեջ վեր հանել հեղինակի կատարած հավելումները և ցույց տալ, թե ինչ գեղարվեստական մշակման է ենթարկվել պատմական նյութը:

Մեր խնդիրն է պոեմի պատմագրական սկզբնաղբյուրներն ուսումնասիրելուց պատ ցույց տալ, որ, ի տարբերություն հին շրջանի ստեղծագործությունների, պոեմում կարևորվում է կերպարների հոգեբանական դրաման՝ ըստ նոր շրջանի գրականությանը բնորոշ հատկանիշների: Անդրադարձ է կատարվել նաև այն հանգամանքին, որ թեև Վանանդեցին պոեմի նյութ է դարձրել հեթանոսական շրջանի դեպքերը, այնուամենայնիվ, որպես քրիստոնյա հեղինակ, անդադար չէշտում է հայ ժողովրդի նախնիների՝ միաստվածության հավատի հետևորդ լինելը:

Հետապոտության ընթացքում առավելապես կիրառվել են վերլուծական ու համեմատական մեթոդները: Կատարվել է նաև կառուցվածքային վերլուծություն՝ գրքի յուրաքանչյուր բաժնի առանձին անդրադարձով:

Ի վերջո, հանգել ենք այն եզրակացությանը, որ ազգի վերաշինության գլխավոր ճանապարհը, ըստ հեղինակի, ազգաճանաչությունն է, հետևաբար նաև նախնիների ուղով ընթանալը, և դա է պատճառը, որ ստեղծագործության մեջ վերհանված են պատմական կերպարների ֆիզիկական ու հոգևոր առավելությունները:

Հիմնաբառեր՝ Հովհ. Վանանդեցի, տեսարան, պոեմ, գեղարվեստական, կերպար, պատմագիր, Մովսես Խորենացի, պատմական դեպքեր, չափաժո:

Ներածություն

Հովհ. Միրզայան Վանանդեցու (1772-1841 թթ.) դերը հայ գրականության մեջ անգնահատելի է: Նա իրավամբ համարվում է հայ պոեզիայի հայրենասիրական, պատմաբաղաբական ուղղության սկզբնավորողը⁵²⁰: Լինելով ժամանակի խոհեմ հոգևորականներից մեկը՝ շուրջ երեք տասնամյակ աստվածաբանություն ու հայկաբանություն է դասավանդել Չմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում:

Հովհ. Վանանդեցու գլխավոր ստեղծագործությունները երեք մեծածավալ պոեմներն են՝ «Արփիական Հայաստանի» (Կ. Պոլիս, 1836 թ.), «Ոսկի դար Հայաստանի» (Չմյուռնիա, 1841 թ.), «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» (Չմյուռնիա, 1856 թ.):

* Հոդվածը ներկայացվել է 30.07.2020թ., գրախոսվել՝ 16.08.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

⁵²⁰ Տե՛ս Հայոց գրականության պատմություն, հ. 3, Երևան, 2015 թ., էջ 72:

«Տեսարան հանդիսացն Յայկայ, Արամայ և Արայի» պոեմը գրվել է ավելի վաղ, սակայն լույս է տեսել 1856 թ.-ին: Պոեմում ներկայացված են հայ ժողովրդի պատմության վաղ շրջանը, անցյալի փառքը, հերոսները: Նյութը մեր նախնիների քաջությունն ու առաքինությունն է: Վանանդեցին հայկական կլասիցիզմի պատմահայեցողության հետևողությամբ իր իդեալը փնտրում էր հայ ժողովրդի հերոսական անցյալի մեջ: Նա ստեղծագործության նյութ է դարձնում հայոց հերոսական անցյալը՝ վկայակոչելով մեր պատմության լավագույն էջերի առասպելական դյուցազուններին: Ամեն դեպքում, Վանանդեցու նպատակը մեր պատմության հին շրջանի դեպքերը սոսկ չափածոյի վերածելը չի եղել: Նա փորձել է գրել հերոսական պատմություն՝ ժամանակակիցների շրջանում հետաքրքրություն ու ոգևորություն առաջացնելով նախնիների սիրանքների ու քաջագործությունների հանդեպ:

Հատկանշական է, որ «Տեսարանում» շեշտը առավելապես դրված է հայրենասիրության ու կրոնասիրության վրա:

Անդրադառնալով պոեմի վերնագրին՝ ակնհայտ է դառնում, որ հեղինակը հետևել է պատմահայր Մովսես Խորենացու խոսքերին: Վանանդեցին, սակայն, ավելի առարկայականություն է հաղորդել ստեղծագործությանը՝ պահպանելով ժառանգականության սկզբունքը: Հայկը և Արամը մեր ժողովրդի էպոսիմներն են համարվում, իսկ Արայի շուրջ հյուսված գրույցները և նրա մասին պատմվող ավանդությունները տարբեր դարերում լայն ժողովրդականություն են ունեցել՝ որպես մեռնող և հարություն առնող աստվածության խորհրդանիշ:

Պատմական դեպքերի գեղարվեստական արտացոլումը պոեմում

Վանանդեցին շարադրանքը սկսել է մեր ժողովրդի նախահայր Հայկի ծնունդից, անդրադարձել ջրհեղեղին, աշտարակաշինությանը, Հայկի ապստամբությանը, ապա մեծ ոգևորությամբ պատկերել պատերազմի ու Հայկի հաղթության տեսարանը, Հայկի միապետությունը, աշխարհաշինությունն ու մահը, այնուհետև ոչ պակաս խանդավառությամբ ներկայացրել Արամի, ապա Արայի միապետության, Շամիրամի ու Արայի հակամարտության, վերջինիս մահվան՝ պատմությունից հայտնի դրվագները: Պոեմի վերջին գլուխը վերնագրված է «Յորդոր նմանիլ նախնեաց», որում հեղինակը խտացրել է բուն ասելիքը:

Ըստ Մ. Աբեղյանի՝ Հովհաննես Վանանդեցու ստեղծագործություններով սկսվում է հայոց քաղաքական անցյալի բանաստեղծությունը, ինչը նշանակալի երևույթ էր մեր գրականության մեջ. «Դարեր շարունակ քաղաքական կյանքը մերժված է եղել երգի արժանանալուց. քերթողները միակերպ միայն վարդ ու սոխակ, պարտեզ ու գարուն են երգել և կամ եկեղեցի ու սրբեր, կրոնական խնդիրներ»⁵²¹: Իսկ ահա Վանանդեցին ստեղծագործության նյութ է դարձնում հայոց հերոսական անցյալը՝ վկայակոչելով մեր պատմության լավագույն էջերի առասպելական դյուցազուններին:

Ստեղծագործության համար պատմական հիմնական սկզբնաղբյուր է ծառայել Խորենացու «Պատմութիւն հայոց» երկը: Հեղինակը հայ ժողովրդի ծագումնաբանությանը վերաբերող որոշ հաստատումներում զգալիորեն օգտվել է նաև Աստվածաշնչից (հատկապես աշտարակաշինությանը վերաբերող դրվագներում):

Հայկի առասպելը գտնում ենք նաև Սեբեոսի պատմության առաջին մասում, սակայն դժվար թե Վանանդեցին ծանոթ լիներ այս երկին, քանի որ վերջինս առաջին անգամ հրատարակվել է 1851 թ.-ին:

Հայկի առասպելը Խորենացին կապում է Աստվածաշնչից հայտնի աշտարակաշինության հետ: Թեթևակի անդրադառնալով աշտարակաշինությանը՝

⁵²¹ Աբեղյան Մ., Երկեր, հ. Դ, Երևան, 1970 թ., էջ 601:

պատմահայրը գրում է. «Յորոց մի էր և Յապետոսթեանն Յայկ, անուանի և քաջ Նախարար, կորովածիզ և հաստաղեղն»⁵²²:

Պոեմում Վանանդեցին աշտարակաշինությունը մի առանձին գլխում է ընդգրկում, որում մանրամասնում է Աստվածաշնչից հայտնի դեպքերը (Ճնևորց 7:1-24), և թե ինչպես «Աստված այլալեզու ծայնի ազգ ազգ տարատրոհեալ», ինչի հետևանքով Նրանց մեջ աղմուկ ու շփոթություն է ընկնում: Պատմահոր հավաստմամբ՝ վայելչակազմ, թիկնավետ, հաստաբազուկ, գանգուր մազերով ու վառվռուն աչքերով մեր Նախնին, չկամենալով հնազանդվել Բելին, Բաբելոնում Արամանյակ որդու ծնվելուց հետո չվում է դեպի հյուսիսային կողմերում գտնվող Արարադի երկիրը, որը Յայաստանի կենտրոնում տեղակայված Արարատյան Նահանգը չէ, այլ Վանա լճի հարավային մասում սփռված բնակավայր է:

Մեր ժողովրդի անվանադիր Նախնին Վանանդեցու բառերով և հորենացու հետևությամբ՝

*Ի ցրուելոց Յայկըն միայն ի Յայս եկեալ,
Սակաւ իւրովք և որք ի յինքն եղեն յարեալ.
Գայ գրտանէ ըվ-Յայաստան խուռըն լըցեալ,
Որ ի բընիկ անդըր լեյուհ յըստակ կացեալ*⁵²³:

Տիտանյան Բելը, ըստ հորենացու, Նեբրովթն է: Մ. Աբեղյանը, սակայն, ճշմարիտ չի համարում այս պնդումը, ինչպես Նաև կասկածամտորեն է վերաբերում հայոց ազգի ծագումը աշտարակաշինության հետ կապելու գրույցներին⁵²⁴:

Վանանդեցին պոեմում կիրառում է Բելի անվանման երկու տարբերակներն էլ՝ հետևելով հորենացուն: Այսպես՝ «Ընդ որս և ոմանք որք ի Նեբրովթայ գործոց զըզուէին, /Յարեցան ի Նա գալ յաստուածաւանդ բընակն առաջին»: «Գիտասջի՛ր՝ ասե, անպարտ ախոյեան մեծըդ դիւցազանց, /Չի դիմեալ գայ Բել արդ ի թո վերայ բազմութեամբ քաջաց»:

Հորենացուց սկսած՝ դարեր շարունակ հայ ժողովրդի հիմնադիր Նախնին Ներկայացվել է որպես քաջազանգուր, քաջաբազուկ, այր հաստաբազուկ: Հովհաննես Վանանդեցին ավելի է խտացրել այս հատկանիշները Յայկի կերպարում: Այս ստեղծագործության մեջ ևս Յայկի արտաքին հատկանիշները հավասարազոր են Նրա ֆիզիկական ուժին:

Պոեմում հեղինակը Յայկ Նահապետի կերպարային Նկարագրությունը տալիս վկայակոչում է պատմահորը, ինչպես Նաև Մար-Աբաս Կատիսային.

*Կամի՛ս գիտել ըվհանգամանս շըբեղ Անձին,
Մարիբասայ յո՛ւր ըստ Զաղդեայ մատենագրին.*

Յորմէ և մեր Զերթողահայր հորենացին,

Ճըշտէ փոքու ի պատմութեանն անդ մատենին (Էջ 9):

Հեղինակը, վերցնելով պատմության ատաղձը, հարստացրել է այն իր բանաստեղծական երևակայությամբ՝ ստեղծելով դարաշրջանի համար մի ինքնատիպ երկ, որի գլխավոր Նպատակը հիմնականում պատանիների ու երիտասարդների մեջ հայրենասիրություն սերմանելն է, ինչը պարզ է դառնում առաջին իսկ տողերն ընթերցելուն պես.

*Որոց վեհակնեայ քաջութեանցն արծան
Այս քերթած կացցէ մանկանց յանդիման.
Խընդամիտ հոգևով յախորժ ընթերցման,
Անձանց բարութեան մըթերել Կոճան (Էջ 3):*

⁵²² Մովսես հորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1981 թ., էջ 38:

⁵²³ Վանանդեցի Յ., Տեսարան հանդիսացն Յայկայ, Արամայ և Արայի, Չմիւռնիա, 1856 թ., էջ 38 (այսուհետ տվյալ գրքից մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում):

⁵²⁴ Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966 թ., էջ 41:

«Որոց ասելով»՝ բանաստեղծը նկատի ունի իր ստեղծագործության երեք գլխավոր կերպարներին:

Մեջբերված չափածո հատվածում տարակարծությունների տեղիք կարող է տալ «մանուկ» բառը, որը գրաբարում մի քանի նշանակությամբ է գործածվել: Կարելի է ենթադրել, որ այստեղ բառը կիրառված է առավելապես «պատանի, երիտասարդ» իմաստներով: Եվ նաև դժվար թե Յովհ. Վանանդեցին նման բարդ գրաբարով չարադրված ստեղծագործությունը ընծայագրեր մանուկներին:

Ի տարբերություն «Արփիհական Յայաստանի» պոեմի, որը Ազաթանգեղոսի պատմության չափածո վերաշարադրանքն է, «Տեսարանում» բառացի մեջբերումները իսպառ բացակայում են: Թերևս պատճառները մեկն էլ այն է, որ Ազաթանգեղոս պատմիչը դեպքերը մանրամասնորեն է նկարագրում, իսկ ահա Խորենացին հակիրճ ու սեղմ է արձանագրում փաստերը: Յեղիսակը «Տեսարանում» իրեն ավելի անկաշկանդ է զգացել դեպքերի պատկերման մեջ: Իհարկե, այս հանգամանքը վկայում է հեղինակի ստեղծագործական ունակությունների և պատմական չոր ու ցամաք փաստերը գեղարվեստականորեն ներկայացնելու ձիրքի մասին:

Երբ Բելը իր հավատարիմ մարդկանցից մի քանիսին ուղարկում է Յայկի մոտ, որպեսզի վերջինս հնազանդվի, Յայկը պատգամավորներին կտրուկ պատասխան է տալիս: Յայկի պատասխանը պոեմում ուղղակի կերպով առկա է: Եվ Բելի դեսպանները կորագլուխ ետ են դառնում դեպի Բաբելոն:

Պոեմի ամենաազդեցիկ հատվածներից մեկը Յայկի՝ Բելին երեթեկյան նետով գետին տապալելու տեսարանն է.

*Ընդ լայնայիճ մրտեալ յաղեղն այրն ուժընդակ,
Չերեթթևեանն հարկանէ նետ ի նըպատակ (եջ 49):*

Լայնայիճ աղեղ կարող էին բանեցնել միայն ամենաուժեղները:

Ահա թե ինչպես է նկարագրում Վանանդեցին Բելի՝ Յայկի նետից գետին ընկնելու դրվագը.

Ըչիպարտ իւր փըջէ ւոզին դիւաբընակ (եջ 49):

Այս հատվածում այնքան դիպուկ է «դիւաբնակ» բառի կիրառությունը: Յեղիսակը միշտ էլ տեղին, իրավիճակին համապատասխան բառեր է կարողանում գտնել: Այսինքն՝ լինելով չար ուժերի հետևորդ՝ Բելը ինքնըստինքյան այդ հատկանիշի կրողը պետք է լիներ:

Յայկի հրամանով Բելի դիակը զմռսում են և թաղում մի բարձրավանդակ տեղում՝ «զօրացն ակն յանդիման»:

Քանի որ երկը հիմնականում ունի դաստիարակչական գործառույթ, հեղինակը հորդորում է փառասիրությանը կույ չզնալ և լինել չափավոր.

*Ա՛յս հատուցումն եղև Բելայ յանդըզուլթեան,
Ա՛յս վարձ գործոց նորա չափեալ վայելչական (եջ 49):*

Այն բլուրը, որտեղ Բելը նետահարվել էր, ստացավ «Գերեզմանք» անվանումը. «Գերեզմանք եղ նըմա կոչումըն յոզնական»: Յ. Էփրիկյանի հավաստմամբ՝ այդ բլուրը գտնվում է Վասպուրականի Երվանդունիք գավառի Յայոց ձորի մեջ⁵²⁵: Գերեզմանք տեղանվանը անդրադարձ է կատարել նաև Գարեգին Սրվանձտյանը⁵²⁶:

Ուշագրավ է Յայկի մահվան տեսարանը: Խորենացին մի քանի բառով է պատմում վերջինիս մահվան մասին. «Սա կեցեալ ամս՝ ծնանի զԱրամանեակ ի Բաբելոնի, որպես վերագոյն ասացաք: Յետ որոյ կեցեալ և այլ ևս ամս ոչ սակաւս՝ մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազգն Արամանեակայ որդւոյ իւրում»⁵²⁷: Այս մի քանի բառը հիմք ընդունելով՝

⁵²⁵ Տե՛ս Էփրիկյան Յ., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903 թ., էջ 514-515:

⁵²⁶ Տե՛ս Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978 թ., էջ 49-51:

⁵²⁷ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 46:

բանաստեղծը «Մահ Չայկայ դիւցազին» գլխում մանրամասնորեն ընթերցողին է ներկայացնում Չայկա Նահապետի կյանքի վերջին ժամերը: Չայկը, «ի պարարտ ծերութիւն բարեաց ազգըն խաղաղեալ», սերունդների առաջ իր պարտքն ու առաքելությունը կատարած՝ վերջին խոսքով դիմում է իր ժառանգներին: Նա կոչ է անում աստվածավախ լինել, Աստծուն սիրել ամբողջ սրտով, հիշել Նախնիների կատարած գործերը, բարի գործեր կատարելով՝ միշտ միաբան ու համերաշխ լինել:

Ճիշտ է, հայերը քրիստոնեությունը՝ որպէս պետական կրոն, ընդունեցին 301 թ.-ին, սակայն Վանանդեցին, որպէս քրիստոնյա հեղինակ, պոետում անդադար չշեղում է մեր Նախնիների, այսինքն՝ Նոյի հաբեթյան ճյուղի շարունակողների միաստվածության հավատի հետևորդ լինելը: Ասվածի լավագույն օրինակը կարելի է տեսնել Չայկա Նահապետի խոսքում: Վերջինս Բելի նկատմամբ տարած հաղթանակը ևս կապում է աստվածային Նախախնամության ու բարեգթության հետ.

*Ծանեայ աներկբայ վԱրարիչըն մեր մեր միշտ խոստովանեալ,
Սուրբ իւր հրամանացն եղէ հրպատակ ի նոյն խրախուսեալ.
Առ ոտըն հարի ըպպաշտօն Բելայ դիմագրաւ կանգնեալ,
Եւ վրսկիվբըն սուտ պաշտմանն ի տապալ արկի կործանեալ (Էջ 60):*

Այս առիթով արժէ հիշատակել Ղևոնդ Ալիշանի տեսակետը. «Եթէ արդարեւ Չայկն Յաբեթի թոռն էր՝ հաւանական էր իր աստուածապաշտութիւնն, ինչպէս հաւանական և ստոյգ այլ է՝ որ ինչուան քանի մի ցեղ Նահապետաց սերունդ և ինչուան Աբրահամու ատեն, տեղ տեղ ուղիղ աստուածապաշտութիւն կար, և վկայեն Ս. Գիրք»⁵²⁸: Այսինքն՝ Ղ. Ալիշանը ճշմարիտ է համարում Նոյից սերված թորգոմյան ճյուղի քրիստոնյա լինելը: Իսկ թէ այդ հավատքը մինչև երբ են պահել մեր Նախնիները, վերջինս համարում է դժվարին կամ «անկարելի ստուգելի»⁵²⁹:

Պոետում Չայկա Նահապետի որդի Արամանյակի անունը փոխարինված է Արմենակ տարբերակով: Չայկը, իրեն հետևորդ հռչակելով վերջինիս, հորդորում է նրան «պահել արուօթամբ զայս ժառանգութիւն յանուն Չայկական, յաղթող հանդիսիւ կալ բըռնացելոցն հըզօր ախոյեան»:

Չեղինակը տպավորիչ տողերով է ներկայացնում Չայկա Նահապետի մահվան դրվագը.

*Կափացումն աչաց և վախճան շընչոյն յայն տեսարանին,
Անշարժ ըպհասակն առնէին նոճեայ հըզօր Չըսկային.
Անպարտըն բազկաց սաստիկ ուժգնութիւն 'ի հարուած նետին,
Շարժել թուլանայր ըպօսի կողերս վարսագեղ մարմնին (Էջ 64):*

Թվում է՝ այդ անպարտելին ու ամենաուժեղը չպետք է հայտնվեր մահվան մահճում:

Պոետում ուրվագծվում է Չայկա Նահապետի կնոջ՝ Չարմանդուխտի կերպարը: Վերջինիս մասին խորենացու պատմության մեջ հիշատակություններ չկան: Չր. Աճառյանը իր «Չայոց անձնանունների բառարանում» խոսելով Չարմանդուխտ հատկանվան ծագման ու նշանակության մասին, չի հիշատակում Չայկա Նահապետի կնոջը Չարմանդուխտ անունով: Ս. Չամչյանը ևս ոչ մի հիշատակություն չի արել: Այս կերպարը, ըստ ամենայնի, հեղինակի ստեղծագործական երևակայության արդյունքն է:

Չովի. Վանանդեցին իրեն բնորոշ զգացմունքայնությամբ նկարագրում է Չարմանդուխտի ողբի տեսարանը.

*Աւա՛ղ իմ կենաց, վա՛յ ինձ առանց քո պայծառ արևին.
Պու սիւն ոսկեղէն, դու յսկանց պարիսպ մերոյ աշխարհին,
Պու ընկեր սիրոյս՝ պիա՛րդ վիս լքեալ թողեր առանձին (Էջ 64):*

⁵²⁸ Ղ. Ալիշան, Գին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895 թ., էջ 24-25:
⁵²⁹ Տե՛ս նոյն տեղում:

Հայկի կորուստը անասելի սուգ էր. «անդ էր աղաղակ լալոյ և կոծոյ սաստիկ որոտման»: Նույնիսկ բնությունն էր սգում հսկայի մահը: Այստեղ բանաստեղծը դիմում է անձնավորման գեղարվեստական մեթոդին՝ նկարագրելով բնության անհանգիստ վիճակը. «Դըղըրդէր երկիր գոռային անծաւթ ի գոչ վայական»: Համատարած սուգ էր տիրում հայոց մեջ:

Վանանդեցին, երբեմն ձեռքի տակ չունենալով պատմական լիարժեք տեղեկություններ, մանրամասները լրացնում է ստեղծագործական երևակայության միջոցով: Սակայն որոշ մանրամասների երբեմն չի էլ անդրադառնում՝ թերևս չցանկանալով հեռանալ ստեղծագործության հիմնական կյուբից: Ասվածի լավագույն հավաստումն այն է, որ բանաստեղծը, իր ստեղծագործության մեջ անդրադարձ կատարելով Հայկ նահապետի թռռներին ու ծոռներին և նրանց բաժին ընկած աշխարհագրական տարածքներին, ամենևին չի հիշատակում նրանցից որոշներին, հատկապես Շարային, Գառնիկին, Սիսակին, Ցուլակին և ուրիշներին: Մանրամասնորեն խոսում է սակայն Հայկի հոռու և Մանավազ որդիների, վերջինիս որդու՝ Բազի և նրանց բաժին հասած գավառների ու նահանգների մասին: Շատ չմանրամասնելով՝ նշենք միայն, որ Վանանդեցին պոեմում պարզապես կրկնում է հորենացուն՝ մեկ անգամ ևս հավաստելով, որ Մանավազը ժառանգել է Հարթ նահանգը, հոռոխոռունիները Հայկի հոռու որդու շառավիղներն են, Բզնուկյաց ծովը նմանօրինակ անվանում է ստացել ի պատիվ Հայկի թոռ Բազի և այլն:

Արամին նվիրված հատվածը պոեմում ամենաթիչ ընգգրկումն ունի: Դա չի խոչընդոտում սակայն նկատելու Հովհաննես Վանանդեցու հիացմունքը պատմական այդ անձնավորության նկատմամբ ևս:

Մեր երկրորդ անվանադիր Էպոնիմ նախնու՝ Արամի մասին պոեմում առաջին հերթին նշվում է, որ նա ընդարձակել է հայրենիքի սահմանները՝ բազում ճակատամարտեր շահելով: Այնուհետև անդրադարձ է կատարվում Արամի և Կյուբար Մադեսի միջև տեղի ունեցած պատերազմին (վերջինիս պատմահայր հորենացին բնորոշում է որպես «այր հպարտ և պատերազմասեր»⁵³⁰), ապա նաև՝ Արամի և Տիտանյան Պայապիս Քառայանի միջև ծագած հակամարտությանը:

Մահվան մահճում, Արամը իրեն հետևորդ հռչակելով որդուն՝ Արային, փորձում է վերջինիս օգտակար լինել իր խորհուրդներով.

*Գործ՝ որ արդ քեզ յանձնըն լինի իշխանական,
Գիտեա՛, քի տուրք է երկնաւոր առատութեան:*

Մի՛ տիրեսցեն ի թո վերայ կիրք անձնական.

Չապգին բարին մի՛ փոխարկեր ընդ մասնական (Էջ 82):

Արամի մահվան կապակցությամբ ևս սուգ է տիրում ողջ երկրում, «անդ կոծ սաստիկ յեղերականս սրգազգեստեալ», «յարտասուաց հեղս գետահետեալ»:

Արային վերաբերող հատվածում շեշտը առավելապես դրված է Արայի ու Շամիրամի հակամարտության վրա: Բանաստեղծը ստեղծագործության մեջ Շամիրամին բնութագրում է «զհճաող գազան», «անդունդ վավաշման», «լիրք շողոմաբան» արտահայտություններով, այսինքն՝ պոեմում Շամիրամը ներկայացված է այնպիսին, ինչպիսին և հայտնի է առասպելից ու ժողովրդական զրույցներից: Շամիրամը, որպես վավաշտության տիպար, պոեմում ևս իր մարմնական ցանկություններին հագուրդ տալու համար պատրաստ է ոչնչի առաջ կանգ չառնելու: Երբ նրա ուղարկած պատգամավորները արդեն երկրորդ անգամ մերժման լուր են բերում (Արան անդրդվելի էր), դիցուհու ողջ ներաշխարհը տակնուվրա է լինում՝ ցնցվելով երկու հակադիր զգացումներից՝ սիրուց ու բարկությունից.

⁵³⁰ Տե՛ս **Սովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 54:
228

*Մեր և բարկությունն ի կրոնի յարեան,
Մին վառէր ըզսիրտն ի գորով խանդան,
Իսկ միւսն ի վրէժ ընդ իւր անարգան* (Էջ 103):

Նկատելի է, որ Հովհաննես Վանանդեցին տեղյակ է եղել Շամիրամի մասին լեգենդներին, նաև այն մասին, որ վերջինս ասորական դիցուհի Դերկետոյի դուստրն է:

*Ծնունդն աս վեհից մարդկային բնութեան,
Արիւն Դերկետայ դից մեր նախնական* (Էջ 93):

Շամիրամին կերպարային առումով հակադրվում է Նուարդը: Պոեմում կերպարների այդ ներքին հակադրությունը չի վրիպում ընթերցողի աչքից: Խորենացու երկում վերջինս հիշատակվում է Արայի մահից հետո միայն, մինչդեռ Վանանդեցու պոեմի՝ Արային նվիրված հատվածում նրա կերպարը ուրվագծվում է կարմիր թելի պես: Հատկանշական է սակայն, որ Նուարդի կերպարը պոեմում կրավորական դեր ունի: Նա հանդես չի գալիս որպես գործող անձ, այլ Արայի վերաբերմունքի մեջ է արտահայտվում:

Պատերազմն անխուսափելի էր, իսկ Արայի կորուստը՝ հիրավի մեծ ցավ, «բոթ գուժեր անդէն Արային մահուան», և այդ ցավը առկա է պոեմում, «ողբայ Հայաստան գԱրայն իւր չըթնաղ պատկեր լուսակիր»: Ողջ երկրի ողբին միախառնված է Նուարդի կոծը, «ողբասցէ՛ Նուարդ դըշխոյն վատաբաղդ ողբ յաւերժական»:

Արայի մահը սգում էր նաև Շամիրամը.

Լընոյր Շամիրամ ոգւով դառնութեան.

Գոչէր կառանչէր ՚ի սուգ անդարման (Էջ 105):

Դերկետոյի դուստրը փորձում է Արային հարալեզների միջոցով վերակենդանացնել, սակայն ապարդյուն:

Հարկ է նշել, որ Մովսես Խորենացին, որպես քրիստոնյա պատմիչ, չէր կարող հավատ ընծայել հարալեզների շնորհիվ Արայի վերակենդանանալու առասպելին: Նույնը նաև կարող ենք ասել Վանանդեցու պարագայում. չէ՞ որ նա ևս, իբրև հոգևորական, որպես ճշմարտություն չէր ընդունի մի բան, որը կհակասեր քրիստոնեական գաղափարաբանությանը: Եվ ահա.

Չի ո՛չ Յարալեպ, ո՛չ դիւթ ինչ պօրեալ,

Ի կորանս ըզճակն ածեն կաթոտեալ (Էջ 107):

Արայի մահից հետո պոեմում կռիվը նոր թափ է ստանում դյուցազնի որդու՝ Կարդոսի գլխավորությամբ: Ստեղծագործության մեջ խոսվում է միայն Արայի Կարդոս որդու մասին: Արայան Արայի մասին պոեմում չի հիշատակվում, կամ թերևս նա նույնացված է Կարդոսի կերպարի հետ: Պատմահոր թողած այս տեղեկության մասին պոեմում ոչ մի հիշատակություն չկա. «Այլ անդէն իսկ ի կենդանութեան իւրում Շամիրամ զծնեալն ի Նուարդայ ի սիրելի կնոջէն Արայի, որ էր երկոտասան ամաց մնացեալ ի մահուանն Արայի, վասն առաջին իւրոց խանդաղատանացն որ առ Արայն գեղեցիկ կոչէ զանուն նորա Արայ և կարգէ զնա ի վերակացութիւն աշխարհիս, մտերմութեամբ հաւատացեալ ի նա. զորմէ և մեռանել ասեն ընդ Շամիրամայ ի պատերազմին»⁵³¹:

Ստեղծագործության վերջին գլուխը վերնագրված է «Յորդոր նմանիլ նախնեաց», որի խորագիրը հենց հուշում է բովանդակության ընդհանուր բնութագիրը: Սա մի ազդեցիկ հատված է, որում երևան է գալիս մանկավարժ ու քահանա Հովհաննես Վանանդեցին, որի կարևորագույն նպատակն է հայրենասիրական ու քրիստոնեական ոգով կրթել, դաստիարակել նոր սերնդին: Այս հատվածը իցե թե ստեղծագործության ամենահաջողված գլուխն է, քանի որ հենց այստեղ է հեղինակը ամփոփում բուն ասելիքը:

Անգեն աչքով էլ նկատելի է, որ երկը ամբողջովին ողողված է քրիստոնեական շնչով, չնայած ըստ եուրեան նրանում ներկայացված են հեթանոսական շրջանի դյուցազունները: Հեղինակը անդրադառնում է Քրիստոսի Թադեոս և Բարդուղիմեոս

⁵³¹ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 74-76:

առաքյալներին, «որք ի հունձ Փըրկչին յերկրի մեր կարգեալ նախարդին մըշակ», հին բնորոշմամբ՝ «առաջին լուսավորչացն մերոց», հայ եկեղեցու Արիստակես, Վրթանես, Հունիկ, Ներսես, Սահակ երախտավորներին «եւ այլ շառաւիղք սըրբոյն Գրիգորի բարեաց բերունակ»: Ահա բանաստեղծը խոսք է բացում Սուրբ երրորդության մասին.

*Սէր Հայր, սէր Որդի, սէր և Սուրբ Հոգի՝ սէր ըզմայլական,
Սուրբ երրորդութիւն սէր և սիրելի գեր քան պատենայն* (Էջ 130):

Խոսելով գրերի գյուտի մասին՝ հեղինակը շեշտում է հայոց մեջ կրթության պակասությունը՝ այդ կերպ կարևորելով ուսման ու գիտելիքի դերը և կոչ անելով ջանք չխնայել հնարավորինս լրացնելու ու կատարելագործելու ուսումը: Իհարկե, այս գործընթացում Վանանդեցին կարևորագույն դեր է վերապահում ծնողներին՝ հորդորելով անապաման ուսման տալ իրենց զավակներին.

*Ծընո՛ղք մարմնատուրք, թէև չէք ծանօթ գըրածան շնորհին,
Մի՛ անգըրագէտ թողուք ըզմանկունսն ի թարմ հասակին* (Էջ 132):

Ուսման նկատմամբ ձգտումը պետք է երեխաների մեջ ներարկել դեռ վաղ տարիքից:

Պոեմում այս կոչը հնչում է բազմիցս.

*Ըդդեզեր կայջիր ի դրունս ուսման,
Հոգևորդ ճեմարան գըրոցն եղիցի ծաղկեալ բուրաստան* (Էջ 146):

Հովհաննես Վանանդեցին, կարևորելով օտար լեզուների իմացությունը, այնուամենայնիվ, առաջնայինը համարում է մայրենի լեզուն.

*Չանա՛ նախագոյն յուսումըն լեզուի քո հայրենական,
Ապա յայլ լեզուաց վարժումն գայցես ըստ վայելչութեան* (Էջ 134):

Հովհ. Վանանդեցին այս երկի միջոցով նաև փորձել է խրատներ հասցեագրել մանուկներին: Նա կարևորում է նաև արհեստների դերը:

Հեղինակը այս դիդակտիկական հատվածում հիշատակում է հայ երևելի գործիչներին՝ վերջիններիս մասին խոսելով բացարձակ ակնածանքով: «Տեսարանը», անշուշտ, ճիշտ չէ դիդակտիկական պոեմ անվանել, սակայն պոեմն ունի դիդակտիկ տարրեր: Դիդակտիկ պոեզիան հայկական կլասիցիզմի շրջանակներում գտավ իր արտահայտությունները (Էդվարդ Հյուրմյուզյանի «Առձեռն բանաստեղծութիւնը», Մկրտիչ Ավգերյանի «Դիմառնութիւն չորից վերջնոցը», Խրիմյան Հայրիկի հրավիրակները և այլն): «Դիդակտիկ պոեզիան հայկական կլասիցիզմի տեսության մեջ կոչվում էր «վարդապետական քերթողություն», և ըստ ամենայնի հիմնավորվում էին նրա իրավունքները, բնութագրվում սահմաններն ու նպատակները»⁵³²:

Հայ ազգի արժանի հետնորդը պետք է կառչած մնա իր արմատներին: Ահա Վանանդեցու պատգամը.

*Չանա՛կ ես քաջաց, մի՛ շիջցի ի քեզ ոգին նախահարց,
Չարմ ես վեհականց յարեա՛ց ի նոսա յորանալ ի վարձ* (Էջ 145):

Հեղինակը իր սիրելի ընթերցողներին հորդորում է նաև ցանկացած գործի մեջ լինել արդար ու ազնիվ:

Ի տարբերություն «Արփիական Հայաստանի» պոեմի՝ այս ստեղծագործության մեջ հեղինակը այուժետային ակնհայտ փոփոխությունների չի դիմել, միայն հավելումներ է կատարել, որոնք հիմնականում մահվան մահճում գտնվող ոյուցազունների վերջին խոսքերն են ամփոփում, սգո տեսարաններ են, և կամ հերոսների պատասխանն են թշնամու պատգամաբերներին: Այուժետային տեղաշարժերը, ըստ Էության, բացակայում են:

⁵³² **Զորբաշյան Է.**, «Դիդակտիկ պոեմները հայ գրականության մեջ», «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1968 թ., համար 1 (40), էջ 54:

Այս ստեղծագործությունը ևս հարուստ է Վանանդեցու ոճին այնքան հատուկ գեղարվեստական պատկերավորման միջոցներով, հատկապես չափազանցություններով: Ահա հայ ժողովրդի նախնի Արամի և Նյուբարի կռվի տեսարանը.

*Երկու լերինք անդ ընդ միմեանս բաղխեն ուժգին,
Հիմնակործանս դողորոշելով ըսպիևս երկրին,
ժայռք անմատոյցք մանրր փռշրեալ՝ ի հարուածին,
Ըզվայրն պայն լընուն բեկորք ապառաժին (Էջ 73):*

Ահա չափազանցության մի ցայտուն օրինակ ևս.

*Դէպք դիականց խիտ խիտ անկեալ անդր ի գետին,
Մայթ մարդկեղէն գործեն յետեղ ասպարիպին (Էջ 78):*

Նաև համեմատություններ ենք գտնում կրկին Արամին նվիրված հատվածում Նյուբարի հոգեվիճակը պատկերելիս.

Որպէս ճընճողուկ ի բապէէ ընդ ծերպ վիմին.

Սառչի արին՝ լըբանի սիրտն առ երկիւղին (Էջ 74):

Չգացմունքային տարրը միշտ առկա է Վանանդեցու երկերում: Այստեղ ևս շեշտը դրված է զգացմունքայնության վրա:

Նկատելի է, որ այս ստեղծագործությունը հեղինակային նորակազմությունների առկայությամբ բավական զիջում է «Արփիական Հայաստանի» պոեմին:

Ձեռագրերի ստեղծման գործում կարևոր դերակատարություն ունեին պատվիրատու-ստացողները: Հովհաննես Վանանդեցու գրչին պատկանող ձեռագրերը արժևորվում են նաև իրենց ստացողներով: Նրա գրած և ընթրինակած ձեռագրերի ստացողներ են եղել իր ժամանակի նշանավոր դեմքերը: «Տեսարանի» ստացողն է Գրիգոր Կոստանոյանը⁵³³: Նա Հովհ. Վանանդեցու աշակերտն է եղել և Չմյուռնիայի հայ գաղթօջախի նշանավոր դեմքերից մեկը: Նրա կինը Հռիփսիմե Կոստանոյանն էր: Հենց վերջինիս ջանքերով է վերականգնվել Չմյուռնիայի 1896 թ. օրիորդաց այրված վարժարանը՝ նրա անունով վերանվանվելով Հռիփսիմյան: Նրանց որդին Գալուստ Կոստանոյանն էր, որ Չմյուռնիայում հայտնի հասարակական գործիչ ու հրապարակախոս էր:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը՝ կարող ենք եզրակացնել, որ Հովհաննես Միրզայան Վանանդեցին կլասիցիզմի հետևողությամբ իր իդեալը փնտրում էր Հին Հայաստանի անցյալի հերոսների մեջ: Ազգի վերաշինության գլխավոր ճանապարհը, ըստ հեղինակի, նախնիների ուղիով ընթանալն է, և թերևս դա է պատճառը, որ նրա հիմնական ստեղծագործություններում վերհանված են մեր նախնիների ֆիզիկական ու հոգևոր առավելությունները:

Երկի առաջնային ու հիմնական նպատակն այն է եղել, որ երիտասարդները ծանոթ լինեն ժողովրդի պատմությանը, ճանաչեն իրենց նախնիներին և իմանալով նրանց կատարած գործերի մասին՝ բարի օրինակ վերցնեն և հպարտ լինեն նրանց ժառանգները լինելու համար:

⁵³³ Տե՛ս Ասատրյան Ա., «Հովհան Միրզայան Վանանդեցու ձեռագրական ժառանգությունը», «Էջվածին» հանդես, 2018 թ., փետրվար, էջ 113:

**FICTIONAL ILLUSTRATION OF HISTORICAL EVENTS IN
«HAYK, ARAM AND ARA'S SCENE» POEM BY
HOVHANNES MIRZAYAN VANANDETSI**

SIRANUSH PARSADANYAN

*Institute of literature after M. Abeghian of NAS of RA, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to compare the additions made by the author in the poem “Hayk's, Aram's and Ara's scene” of Hovhannes Vanandetsi and to show the artistic elaboration of the historical material.

Our task is to show, in addition by studying the historical sources of the poem, that unlike the works of the old period, the psychological drama of the figures is important, according to the features characteristic of the literature of the new period. Reference was also made to the fact that Vanandetsi made the events of the pagan period the subject of the poem, nevertheless, as a Christian author, he constantly emphasizes the fact that the ancestors of the Armenian people were the followers of monotheism.

The article intertwines literary and textual work. Analytical-comparative methods were mostly used during the research. A structural analysis was also performed, referring to each section of the book separately.

Eventually, we come to the conclusion that according to the author the main way to rebuild a nation is getting know the nation, and therefore to follow in the footsteps of the ancestors. That's why the work reveals the physical and spiritual advantages of historical figures.

Key words: *Hovhannes Vanandetsi, scene, poem, fictional, hero, historian, Movses Khorenatsi, historical events, poem.*

**ХУДОЖЕСТВЕННОЕ ОЛИЦЕТВОРЕНИЕ ИСТОРИЧЕСКИХ СОБЫТИЙ
В ПОЭМЕ «ЗНАМЕНИТЫЕ ДЕЯНИЯ АЙКА, АРАМА И АРА»
ОВАННЕСА МИРЗЯНА ВАНАНДЕЦИ**

СИРАНУШ ПАРСАДАНЯН

*аспирант Института литературы имени М. Абегамяна РА НАН,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является установить, какие дополнения внес автор, Ованнес Ванандеци, в поэму «Знаменитые деяния Айка, Арама и Ара» и сравнить их с оригинальным текстом, а также показать какую художественную обработку претерпел исторический материал.

Нашей задачей, помимо изучения исторических первоисточников поэмы, является показать что, в отличие от произведений литературы древнего периода, в поэме важное место отводится изображению душевной драмы персонажей, что характерно для литературы нового времени. В статье нашел отражение также тот факт, что, несмотря на то, что темой поэмы Ванандеци являются события эпохи язычества, автор, будучи христианином, неоднократно подчеркивает, что предки армянского народа являлись приверженцами монотеистической веры.

В ходе исследования применялись преимущественно аналитико-сравнительные методы. Был также проведен структурный анализ со ссылкой на каждый по-отдельности раздел книги.

Подводя итоги исследования, мы приходим к выводу о том, что главным условием возрождения нации, по мнению автора, является ее самопознание, а значит, и пример предков; именно поэтому в работе раскрываются физическая красота и нравственные достоинства исторических персонажей.

Ключевые слова: *Ованнес Ванандеци, поэма, художественное, герой, историограф, Мовсес Хоренаци, исторические события, поэтический.*